ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ՀԵՆՐԻ-ՇԻՆ ՍՊԸ-ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/318 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Սեղանի չափսերը՝ 1200 x 600 x 760 մմ: Սեղանի աշխատանքային հարթության, կողապատերի (ոտքերի), հետնապատի և գզրոցի համար պետք է օգտագործվի լամինացված ՓSU 18 մմ հաստությամբ: Աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 1-2 մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 0.4 մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Սեղանի առջևը փակվում է 18 մմ հաստությամբ ՓSU-ով (դիմապատը)՝ որի չափսերն են՝ 1164 x 450 x 600 մմ, որը տեղադրվում է սեղանի աշխատանքային հարթության տակից, եզրին հավասար և ամրանում է աշխատանքային հարթության եզրին(տակից) և կողապատերի(ոտքերի) ներսի մասին: Կողապատերի (ոտքերի) լայնությունը՝ 570 մմ: Կողապատերի (ոտքերի) եզրերը պետք է շրջափակվեն 1-2 մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին պետք է ամրացվի ոտիկներ՝ 5-6 մմ բարձրությամբ: Սեղանի աշխատանքային հարթության վերևի աջ և ձախ եզրային անկյուններում համակարգչային տեխնիկայի լարերի համար պետք է տեղակայվի միջանցիկ անցքեր՝ տեղակայված փակվող խցաններով: Սեղանը պետք է ունենա առանձին, 4 անիվի վրա շարժվող գզրոց, չափսերը՝ 410 x 460 x 590 մմ, երեք դարակներով համապատասխանաբար չափսերով՝ 140,140,270 մմ, հնարավոր առավելագույն խորությամբ, միասնական փականով փակվող, դարակները բացվում և փակվում են փափուկ փակվող, անաղմուկ սահնակներով (սալյասկա): Սեղանը, կողապատերը (ոտքերը), դիմապատը, գզրոցը և պլաստիկե եզրաժապավենները պետք է լինեն նույն՝ բնափայտի գույնի, բաց երանգի: Դարակները պետք է ունենան օվալաձև մետաղական բռնակներ,

	որոնց երկարությունը պետք է լինի առնվազն 100 մմ: Միացումներն իրականացնել երաշխավորված և թաքնված ձգանների միջոցով: Բոլոր մանրամասները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Ապրանքն անհրաժեշտ է մատակարարել պատվիրատուի պահանջով, ժամկետներում և պատվիրատուի կողմից նշված հասցեում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ГЕНРИ-ШИН ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-26/318 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	